# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Սյունիքի մարզ, Գ. Աղիտու. հեռ. 093-341389, էլ. Հասցե aghiug@mail.ru

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 17-ի 01Ա, 02Ն, 03Ա, որոշումները:

Առդիր ˝6˝ թերթ

Աղիտու համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

17 փետրվարի 2014թ.

Գ.Աղիտու

1371
21 02 2014

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"17" փետրվարի 2014թ.

№01Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի Մարզի Աղիտու գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի Մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանու 2014թվականի փետրվարի 17–ի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող վարելահողերից և արոտներից բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 20–ի №09 Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Աղիտու համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ____________ Թ. Աղաջանյան

Կողմ՝ ____________ Ս. Տատինցյան

Կողմ՝ ____________ Մ. Մակարյան

Կողմ՝ ____________ Մ. Կար[illegible]

Կողմ՝ ____________ Գ. Մ[illegible]

Աղիտու համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

2014թ. 17 փետրվարի

գ. Աղիտու

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“17” փետրվարի 2014թ. № 02Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻՑ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻՑ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով և 91-րդ հոդվածի 1-ին կետի 1)-ին և 2)-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Աղիտու գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ 03Ն որոշումն և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի Մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանին

որոշում է.

1.2014 թվականի առաջին եռամսյակում բաց մրցույթով, 10տարի ժամկետով, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման նպատակով վարձակալության տրամադրել Աղիտու գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի անջրդի վարելահողերից՝ 3հա (ծածկագիր 09-011-0125), 4,9992հա (ծածկագիր 09-011-0125), մեկ հեկտար հողամասի տարեկան վարձավճարը՝ 5000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

2. 2014 թվականի առաջին եռամսյակում բաց մրցույթով, 25տարի ժամկետով, խոշոր և մանր եղջրավոր անասուններին արածացնելու նպատակով վարձակալության տրամադրել Աղիտու գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի անջրդի արոտներից՝ 8,0492հա (ծածկագիր 09-011-0125) և 5-րդ կարգի անջրդի արոտներից 0,9348հա (ծածկագիր 09-011-0126-0009), 0,4671հա (ծածկագիր 09-011-0126), 10,9247հա (ծածկագիր 09-011-0123-), 10,9141հա (ծածկագիր 09-011-0126) մեկ հեկտար արոտի տարեկան վարձավճարը՝ 4-րդ կազի համար 2250 ՀՀ դրամ և 5-րդ կարգի համար 1000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

3. 2014 թվականի առաջին եռամսյակում բաց մրցույթով, 25տարի ժամկետով վարձակալության տրամադրել Աղիտու գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողերից՝ 3,1963հա (ծածկագիր 09-011-0116 մեկ հեկտար հողամասի տարեկան վարձավճարը՝ 1000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

4. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Աղիտու համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ ______________ Թ. Աղաջանյան

Կողմ՝ ______________ Ս. Տատինցյան

Կողմ՝ ______________ Մ. Մակարյան

Կողմ՝ ______________ Մ. Կարապետյան

Կողմ՝ ______________ Գ. Մարտիրոսյան

Աղիտու համայնքի ղեկավար՝ [illegible]. Ավետիսյան

2014թ. 17 փետրվարի

գ. Աղիտու

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

“17” փետրվարի 2014թ.

№ 03Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի № 09Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով և 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի բ)ենթակետով, “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ կետով և 16-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի երկրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. փետրվարի 24-ի թիվ 164Ն որոշման հավելվածի 3-րդ և 5-րդ կետերն, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի Մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանին

որոշում է.

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին (համայնքի ղեկավարին)կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի.

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու ու հանձնաժողովի կազմը հաստատելու և համայնքի ավագանու 2010թ. հունիսի 17-ի № 07Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 09Ա որոշումը:

3. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Աղիտու համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝ ______________ Թ. Աղաջանյան

Կողմ՝ ______________ Ս. Տատինցյան

Կողմ՝ ______________ Մ. Մակարյան

Կողմ՝ ______________ Մ. Կարապետյան

Կողմ՝ ______________ Գ. Մարտիրոսյան

Աղիտու համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

2014թ. 17 փետրվարի

գ. Աղիտու

*Հավելված*

ՀՀ Սյունիքի մարզի Աղիտու
գյուղական համայնքի ավագանու
2014թ. փետրվարի 17 -ի № 03Ա որոշման

**Կ Ա Զ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Նուշիկ Գրիգորյան –Աղիտուի հիմնական դպրոցի մանկավարժ, հանձնաժողովի նախագահ(համաձայնությամբ)
2. Գայանե Յոլչյան – Աղիտու համայնքի սոցիալական աշխատող, հանձնաժողովի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
3. Լուսինե Հարությունյան – Աղիտուի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի քարտուղար(համաձայնությամբ)
4. Անժելա Օհանյան- Աղիտուի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնեգետ-հաշվապահ, հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)
5. Արկադի Հովհաննիսյան - «Ընդդեմ իրավական կամայականության» Հ/Կ Սիսիանի քաղաքացիական կենտրոնի իրավաբան-խորհրդատու հանձնաժողովի անդամ(համաձայնությամբ)
6. Սուրեն Շահնազարյան - Աղիտուի հիմնական դպրոցի մանկավարժ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
7. Լուիզա Ղազարյան - Աղիտուի հիմնական դպրոցի մանկավարժ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)
8. Լիանա Ավանեսյան- բուժքույր, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ)

Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Լ. Հարությունյան